# ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԿԱԽ

USAID
IREX

ԱՅՍ ԹՈՂԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է
IREX/ProMedia - Ի ԿՈՂՄԻՑ ԵՎ ԱՄՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (USAID) ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ:
ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԵՋ ՏԵՂ ԳՏԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ ԵՎ ՄԻՇՏ ՉԷ, ՈՐ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ ԵՆ USAID-Ի ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻՆ:

2003
ՓԵՏՐՎԱՐ

## ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Հայ լրագրողների պատրաստած այս հավելվածը հովանավորել է Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությունը: Այս հրատարակությունը կոչված է հասարակական ծառայություն մատուցել բոլոր հայ քաղաքացիներին: Սա այն հիմնախնդիրների անաչառ արտացոլումն է, որոնք, Հայաստանի քաղաքացիների կարծիքով, փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների նախաշեմին անչափ կարևոր են իրենց ու երկրի համար:

Հավելվածում ներկայացված են նախագահի թեկնածուների պատասխանները, որոնք պարզաբանում են, թե ընտրվելու դեպքում նրանք ինչպես կլուծեն ընտրողներին հուզող այս կամ այն հարցը:.

Այս թերթը նաև ժողովրդավարության գործընթացում մամուլի անկախ դերի օրինակ է: Ընտրողների համար նախատեսված հավելվածի վրա հայաստանյան լրագրողներն աշխատել են ամերիկացի իրենց գործընկերների հետ: Հավելվածն առաջարկվում է որպես ընտրությունների մասին տեղեկատվության անաչառ, արդար և փաստացի լուսաբանման նմուշ:

Աշխատանքն սկսվել է հունվարի կեսերին, երբ Հայաստանի շուրջ 400 քաղաքացիների շրջանում հարցում անցկացվեց նրանց հուզող հիմնախնդիրների վերաբերյալ: Ոչ պաշտոնական հետազոտության արդյունքում առանձնացվեց այն հինգ հիմնահարցը, որոնք ընտրողներն ամենահաճախն էին նշել: Դրանք էլ առաջարկվեցին նախագահի թեկնածուներին: Հավելվածում բոլոր թեկնածուների պատասխաններին հավասարաչափ տեղ է հատկացված: Պատասխանները ներկայացվել են առանց խմբագրման, անփոփոխ:

Հավելվածում ընդգրկել ենք նաև ընտրողների համար կարևոր տեղեկատվություն, որպեսզի ընտրական իրավունք ունեցող անձինք հնարավորություն ունենան ակտիվորեն մասնակցել քվեարկությանը և կշռադատված որոշում կայացնեն երկրի ապագա ղեկավարին ընտրելիս:

Ընթերցողին փորձել ենք ծանոթացնել նախագահի իրավասություններին և պարտականություններին, ինչպես նաև պատասխանել մի շարք գործնական հարցերի. ինչպե՞ս, ե՞րբ, որտե՞ղ քվեարկել, ինչպե՞ս ներկայացնել ընտրախախտումների մասին բողոքները և այլն:

IREX/ProMedia-ն հոգացել է հավելվածի տպագրության մասին, ինչպես նաև կազմակերպել հավելվածի տարածումը՝ ներդիրի ձևով հայկական թերթերի միջոցով: Հավելվածն անմիջականորեն կբաժանվի ընտրողներին:

Նման հավելված նախատեսում ենք հրապարակել նաև մայիսի 25-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ:

Հուսով ենք, թերթն օգտակար կլինի: Ընտրողներին առաջարկելով վստահելի, փաստացի տեղեկատվություն՝ ցանկանում ենք քաջալերել նրանց մասնակցելու բոլոր ընտրություններին, որպեսզի իրենց ձայնը լսելի դառնա:

Ձեր մեկնաբանությունները, հարցերն ու առաջարկները կողջունվեն:

Peter H. Eichstaedt

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2003 - Ի
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
ՍՈՒՐԵՆ ԴԵՀԵՐՅԱՆ, ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԳՈՀԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ, ՎԻԿՏՈՐՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ՄԱՐԻԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՎԱՀԱՆ ԻՇԽԱՆՅԱՆ, ԺԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ – ՏԵՐՅԱՆ, ՋՈՒԼՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ .

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ
Պիտեր ԱՅԿՍՏԱԴՏ
IREX/ProMedia-ի ԶԼՄ-ների հարցերով խորհրդատու
Նաիրա ՄԱՆՈՒՉԱՐՈՎԱ
IREX/ProMedia-ի ծրագրի ղեկավար
Թագուհի ՍՈՒԽԼԻՅԱՆ
Գեղամ ԽԵԿՈՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

Նախագահական ընտրությունների նախաշեմին լրագրողների անցկացրած հարցումը մի քանի հարյուր ընտրողների շրջանում առանց անակնկալների չանցավ:

Այն, որ երկրի բնակչության գերակշիռ մասը առաջնային է համարում սոցիալական ու տնտեսական ոլորտի հիմնախնդիրները, ապացուցվեց թվերով: Անսպասելին, թերևս, այն էր, որ բաժանվեցին Երևանի ու մարզերի հարցման մասնակիցների կարծիքները: Եթե մայրաքաղաքում առաջնային էր սոցիալական ոլորտը, ապա մարզերի բնակիչներն ընդգծեցին տնտեսական խնդիրների լուծման առաջնահերթությունը:

Տնտեսական հիմնախնդիրը Երևանում զբաղեցնում է միայն 8-րդ հորիզոնականը և կազմում ընդհանուր հարցվածների 16.3%-ը: Իսկ մինչ այդ իրենց կայուն տեղն են զբաղեցնում գործազրկությանը, կրթությանը, դատաիրավական համակարգին, կոռուպցիային, առողջապահությանը և ղարաբաղյան հիմնահարցին վերաբերող խնդիրները:

Ընդհանուր առմամբ հարցման 464 մասնակիցներն արտահայտվել են 17 հիմնախնդիրների շուրջ (գործազրկություն, արտագաղթ, կոռուպցիա և այլն)՝ ցանկանալով, որ գործող նախագահն առավելագույն ուշադրություն ցուցաբերի հատկապես այդ հիմնախնդիրներին:

Հարցման մասնակիցներից 331-ը Երևանից ու հարակից շրջաններից են, 56-ը՝ Գյումրիից ու Վանաձորից, իսկ 77-ը՝ Սյունիքի մարզից:

Երևանում կոռուպցիայի դեմ պայքարի և առողջապահության հիմնախնդիրներն ըստ հաճախականության ունեն գրեթե նույն ցուցանիշը (համապատասխանաբար 28,3 և 28,0 տոկոս): Եզրակացությունն ակնհայտ է. մարդիկ իրենց առողջությունը չեն զատում հասարակության ու պետության առողջությունից:

Թե Երևանում ու թե մարզերում ղարաբաղյան հակամարտության լուծումը տեղ չգտավ առավել կարևոր հիմնախնդիրների առաջին հնգյակում: Անգամ Սյունիքում, որը թեև ավելի մոտ է Ղարաբաղին, քան Հայաստանի մյուս մարզերը, ղարաբաղյան խնդրին հարցման 77 մասնակիցներից անդրադարձել է ընդամենը 4-ը:

Դրա մասնակի բացատրությունն ինչ-որ չափով հնչեց Երևանից Աշոտ Պատատյանի պատասխանում. «Ղարաբաղի համար մենք հիմա ավելի հանգիստ ենք, քանի որ և կառավարությունը, և միջազգային միջնորդները ջանում են խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ»:

Առանձնահատկություններից հարկ է նաև նշել հարցման մասնակիցների վերաբերմունքը աղետի գոտու վերականգնման խնդրին:

Եթե Երևանում և Սյունիքում աղետի գոտին՝ որպես հիմնախնդիր, գտնվում է վերջին տեղերում, ապա Գյումրի և Վանաձոր քաղաքներում այն զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը:

Հասկանալի է, որ դեռևս մի քանի տարի առաջ, երբ աղետի գոտում շինարարությունը սառեցված էր, այս ցուցանիշը առաջինների թվում կլիներ: Այսօր երկրաշարժից տուժած շրջանների բնակիչները ավելի շատ աշխատատեղերի կարիք ունեն: Այստեղից էլ՝ տնտեսական ոլորտի շեշտադրումը:

Տնտեսական հիմնախնդրից հետո Երևանում և հարակից շրջաններում հարցման մասնակիցների մի մասն առանձնացնում է արտագաղթը, ազգային անվտանգությունը, մարդու իրավունքների պաշտպանությունն ու մամուլի ազատությունը:

Բնակչության մյուս մասն էլ կարևորում է, որ ընտրվող նախագահն առավելագույնս զբաղվի ահաբեկչության, «հոկտեմբերի 27»-ի բացահայտման և ցեղասպանության հիմնախնդիրներով, ինչպես նաև գյուղատնտեսության և շրջակա միջավայրի հարցերով: Եվ ընդամենը 3.6%-ն է նշում Հայաստանում երկքաղաքացիության անհրաժեշտության մասին:

...Ինչ վերաբերում է ընտրություններին, ապա մեր հարցման արդյունքներից ելնելով՝ սպասվում է բնակչության ակտիվ մասնակցություն:

ՍՈՒՐԵՆ ԴԵՀԵՐՅԱՆ

### ԿԸՆՏՐԵ՞Ն ԱՐԴՅՈՔ

**ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**




ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՏԱՐԲԵՐ ՇԵՐՏԵՐԻ ՊԱՏԿԱՆՈՂ, ԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ 464 ՏՂԱՄԱՐԴ ԵՎ ԿԻՆ

# ...ՈՐ ՕՐ ԾԵՐՈՒԹՅԱՆ ՉՀԱՅՏՆՎԵՆ ԿՈՏՐԱԾ ՏԱՇՏԱԿԻ ԱՌԱՋ

**«Այստեղ ցուրտ է, բայց լավ է, որ այնպես սոված չեմ, հետո շորեր եմ շատ հագնում, որ չմրսեմ: Բայց այստեղ էլ չեմ կարողանում լողանալ, այնտեղ տասը օրը մեկ բաղնիք էին տանում»,- համեմատում է երևանյան և սիբիրյան ցուրտը վերարկուների մեջ փաթաթված 80-ամյա Անտոնինա Մահարին՝ գրող Գուրգեն Մահարու այրին:**

**Նրա երևանյան բնակարանում Սիբիրը վերջին տարիներին հայտնվում է ցրտի տեսքով. այնտեղ այս ձմռանը ջերմաստիճանը 0 է, երբեմն լինում է -1 կամ +1:**



Լիտվուհի Անտոնինան 8 տարի եղել է սիբիրյան աքսորում, որտեղ ամուսնացել է Գուրգեն Մահարու հետ և ազատվելուց հետո մշտական բնակության եկել Հայաստան:

Աքսորից վերադառնալուց հետո էլ Սիբիրը չլքեց նրան. մի դեպքում հայտնվում է ցրտի տեսքով, մեկ՝ որպես հավատաքննիչ, ինչպես յոթանասնական թվականներին, երբ ամուսնու Գուրգեն Մահարու վեպը «Այրվող այգեստանները», վառում էին պատուհանի տակ: Մի դեպքում այցելում է դստեր մահվան, մեկ՝ որդու խելագարության տեսքով: Եվ Սիբիրը դարձավ դժբախտության խորհրդանիշ, որը մինչեւ օրս ուղեկցում է նրան:

Ստացած թոշակը՝ 4500 և որդունը՝ հաշմանդամության համար 3000 դրամ, գումարած 4000 դրամ աղքատության նպաստը, բավարարում է աղքատիկ սննդի համար: Սնվում են հիմնականում վարսակով, որ էժան է և սննդարար:

Հայաստանում միջին թոշակը հունվարի 1-ից 6600 դրամ է դարձել: Հանրապետությունում կան 542 հազար կենսաթոշակառու:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ վերջին վեց տարվա ընթացքում կենսաթոշակառուների թվաքանակը նվազել է 54,2 հազար մարդով կամ 8,9%-ով: Դա բացատրվում է ինչպես կյանքի միջին տևողության նվազումով, այնպես էլ բնակչության ինտենսիվ միգրացիայով:

Հարցման մասնակիցների 76 տոկոսը նախագահից պահանջում է բարձրացնել կենսաթոշակները:

«Կենսաթոշակների չափը տնտեսական արդյունքների արտացոլանքն է: Նաև՝ որքան հարկային դաշտը լավ աշխատի, այնքան թոշակները կբարձրանան,- ասում է ՀՀ սոցիալական ապահովության փոխնախարար Աշոտ Եսայանը,- 2,5 տարի առաջ Սոցիալական ապահովագրության հիմնադրամը 4 միլիարդ պարտք ուներ: Հիմա հասցրել է դա փակել և 1/3-ով բարձրացնել թոշակները (Վերջին մեկ տարվա ընթացքում թոշակները բարձրացել են 2000 դրամով): Դա լավ աշխատանքի շնորհիվ է: Եթե մարդուն չստիպես, իր հարկը չի տա: Իսկ հիմնադրամը գոյանում է այդ հարկերից: Ինչ հավաքում ես, էն էլ բաժանում»:

Սոցիալական ապահովագրության հիմնադրամը ստեղծվել է, որ բյուջեի նկատմամբ տարբեր ոտնձգություններից փրկի կենսաթոշակները: Այժմ յուրաքանչյուր աշխատավարձի 28 տոկոսը հարկ է մուծվում այս հիմնադրամին:

Սոցիալապես անապահով 96 հազար կենսաթոշակառու բյուջեից ստանում է նաև 4000 դրամ աղքատության նպաստ: Պրն Եսայանն ասում է, որ նպաստը պետք է տրամաբանական համաչափության մեջ լինի նվազագույն աշխատավարձի (5000 դրամ) և թոշակի միջև, այսինքն՝ չգերազանցի դրանք:

Սակայն 76-ամյա Լիդա Խուդոյանը, որի գոյության միակ աղբյուրը 7100 դրամ թոշակն է, զրկված է նպաստից, քանի որ տանը գրանցված է Ռուսաստանի Դուբնա քաղաքում բնակվող որդու ընտանիքը: Որդին աշխատում է բյուջետային գիտական հիմնարկում: Մայրն ասում է, որ նրա աշխատավարձը հազիվ բավարարում է 4 անդամ ունեցող ընտանիքի հոգսերին:

«Աղքատությունը և անհավասարությունը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» Համաշխարհային բանկի 2000 թ. հրատարակած գրքում մեջբերված այն միտքը, թե «Հանգիստ ծերության հույս ունեցող թոշակառուները դառնորեն պարզում են, որ հայտնվել են «կոտրած տաշտակի» առաջ», վերաբերում է Լիդա Խուդոյանին:

41 տարվա աշխատանքային ստաժ ունեցող տիկին Լիդան թոշակը ծախսում է սննդի և երեք ամիսը մեկ 3 կգ-անոց գազի բալոնը լիցքավորելու ու կոմունալ վարձերի վրա. «1500 դրամ հացի եմ տալիս, առնում եմ մակարոն, ամռանն էլ բանջարեղեն: Տրանսպորտից ընդհանրապես չեմ օգտվում, որովհետև մի երկու անգամ երթուղայինով գնամ, սննդիս վրա կազդի: Հացուստ ընկերներս են տալիս: Իսկ երբ հիվանդանում եմ, ուզում են դեղ բերել, ասում եմ՝ դեղ խմել չեմ սիրում, որ մարդկանց ծախսի տակ չգցեմ»:

Լիդան նույնպես բնակարանը չի կարող ջեռուցել: Անկողնուց դուրս չի գալիս՝ փաթաթված մի քանի վերմակի մեջ: Ցուրտ օրերին ջերմաստիճանը 0-ից ցածր է, քանի որ ջուրը սառչում է:

Մի քանի անգամ դիմել է նպաստ ստանալու խնդրանքով, մերժվել է. «Վերջին անգամ ուղղակի կոպտեցին»:

«Սոցիալական խնամակալության բացառման սկզբունք ունենք, որ մարդ հույսը չկապի նպաստի հետ ու այլ աղբյուրներ որոնի,- ասում է պրն Եսայանը,- եթե թոշակառուն չափահաս զավակ ունի, օրենքով նա պարտավոր է խնամել ծնողին: Եթե զավակը չի կատարում իր պարտականությունը, ծնողը կարող է դիմել դատարան ու ալիմենտ պահանջել»:

73-ամյա միայնակ թոշակառու, 40 տարվա աշխատանքային ստաժ ունեցող Լենա Հովսեփյանն իր 7000 դրամ թոշակը և նպաստը ծախսում է միայն սննդի վրա:

«Թոշակս 2000 դրամով որ բարձրացավ, որոշ նշանակություն ունեցավ, բայց մեծ չի փոփոխությունը»,- ասում է նա: Լենան պոլիարթրիտ ունի, որի հետևանքով ախտահարվել են ոտքերը և մեծ դժվարությամբ է շարժվում:

Ի տարբերություն Անտոնինայի և Լիդայի, նրա բնակարանը արդեն 2-րդ տարին է, ինչ տաքացվում է: էլեկտրական վառարանը տրամադրել, էլեկտրաէներգիայի վարձավճարը տալիս է և Լենայի համար կենսական անհրաժեշտություն ունեցող անվճար դեղորայք է հատկացնում նրան «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը, որ 6000 թոշակառուների համար սոցիալական և առողջապահական ծրագիր է իրականացնում:

«Մենք անդադար փորձում ենք ընդգրկել նոր կարիքավորների: Նախկինում նաև փնտրում էինք, սակայն այժմ դիմողներն այնքան շատ են, որ էլ չենք հասցնում փնտրել,- ասում է «Առաքելություն Հայաստանի» նախագահ Հռիփսիմե Կիրակոսյանը:- Կլինեն շատ աղքատ ծերեր, որ չգիտեն մեր մասին, սակայն ով դիմի, օգնություն կստանա: Մենք ունենք հնարավորություններ»:

450 աշխատող ունեցող կազմակերպությունը կարիքավոր ծերերի համար բարեգործական 21 ճաշարան է բացել հանրապետության 8 մարզերում, նաև ստեղծել է վերականգնողական կենտրոններ: Բացի այդ, կազմակերպության աշխատակիցները վերանորոգում են թոշակառուների բնակարանները, բժշկական օգնություն և այլ ծառայություններ մատուցում տանը:

Եվ Անտոնինան, և Լիդան, և Լենան հանրապետության շատ աղքատ խմբի մեջ են, որոնք ըստ Համաշխարհային բանկի աջակցությամբ Ազգային վիճակագրության ծառայության կատարած հետազոտության, կազմում են բնակչության 16 տոկոսը: 1998 թ. համեմատ այս ցուցանիշը իջել է 7 տոկոսով (նախկինում՝ 22,9 տոկոս): Այդ խմբից յուրաքանչյուրի օրական ծախսը կազմում է 1 դոլար (Անտոնինայինը և նրա որդունը առանձին-առանձին՝ 33 սենթ, Լիդայինը՝ 40): Ըստ նույն հետազոտության, աղքատ է բնակչության 50,9 տոկոսը (1998 թ. եղել է 55,05 տոկոս): Աղքատները ծախսում են յուրաքանչյուրը 2 դոլար: Շատ աղքատների 16 տոկոսը մտնում է այս 50,9 տոկոսի մեջ:

«Սոցիալական իրավիճակի բարելավումը միայն պայմանավորված է տնտեսական աճով,-ասում է Համաշխարհային բանկի արտաքին կապերի պատասխանատու Վիգեն Սարգսյանը,- միջին ստանդարտ կա, որ եթե տարեկան աճը 10-ից ավելի է, աղքատությունը կրճատվում է (2002 թ. պաշտոնապես տնտեսական աճը կազմել է 12,9 տոկոս): Սպասել, որ միանգամից հարցերը կլուծվեն, հնարավոր չէ: Սոցիալական լարվածության պայմաններում պետք է երկնիշ թվերով աճը կրի կայուն բնույթ, որ քայլ-քայլ նվազի աղքատությունը»:

**Վահան ԻՇԽԱՆՅԱՆ**

# ՆԱԽԱԳԱՀԸ ԿԱՐՈՂ Է...



Փետրվարի 19-ին տեղի կունենան հանրապետության նախագահի ընտրությունները: Մեծ նշանակություն ունեցող այս գործընթացի յուրաքանչյուր մասնակցի համար կարևոր է հստակ գիտակցել, որ Հայաստանի Հանրապետության նախագահը պետք է հետևի Սահմանադրության պահպանմանը, ապահովի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Հանրապետության նախագահը պետք է լինի նաև անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը:

Լրագրողական մեր խմբի կողմից անցկացված հարցման արդյունքում պարզվեց, որ մարդիկ մեծ հույսեր են կապում պետության գործադիր իշխանության ղեկավարի հետ: Մայրաքաղաքի բնակիչ, 39 տարեկան Միկա Ավանեսյանը, դիմելով նախագահին, ընդգրկուն պահանջ է ներկայացնում. «Ստեղծեք աշխատատեղեր, աշխատատեղեր և դարձյալ աշխատատեղեր»:

Վանաձորցի 31-ամյա Արտակ Փարսադանյանին էլ մտահոգում է հետևյալ խնդիրը. «Այս տարի կլուծվի՞ արդյոք Վանաձորի քիմհամալիրի վերագործարկման հարցը»:

Այն, որ այս հարցերն ուղղվում են նախագահին, միանգամայն տրամաբանական ու արդարացի է, քանի որ նա է պատասխանատու աշխատատեղերի ստեղծման համար: Նա է իրականացնում կառավարության ընդհանուր ղեկավարումը, նշանակում և ազատում վարչապետին, վարչապետն էլ, իր հերթին, ղեկավարում է կառավարության ընթացիկ գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:

Եթե լուծված լինի աշխատատեղերի և գործազրկության հարցը, ապա որոշակի լուծում կստանա նաև մեր հայրենակիցներին մտահոգող ևս մեկ խնդիր՝ արտագաղթը: Գոնե այն դեպքերում, երբ արտագաղթը պայմանավորված է աշխատանք չունենալով:

Երևանցի Արամ Սահակյանը (33 տարեկան) հետաքրքրվում է. «Կմտածե՞ք ներգաղթի պայմաններ ստեղծելու մասին»:

Ներգաղթի համար անհրաժեշտ պայմանները, իհարկե, չեն սահմանափակվում նոր աշխատատեղերի ստեղծմամբ: Հարկ է լուծել նաև մի շարք հարցեր, այդ թվում կապված կոռուպցիայի հետ:

Երևանաբնակ Նազելի Հարությունյանը նշում է հակակոռուպցիոն պայքարի կարևորությունը. «Կաշառակերության դեմ պայքարը դառնում է օրապահանջ: Նախագահն ի՞նչ լծակներ ունի դրա դեմ պայքարելու համար»:

Եթե կոռուպցիոն բնույթ ունեն օրենսդրական ակտերը, ապա տվյալ դեպքում նախագահը որպես լծակ կարող է օգտագործել վետոյի իրավունքը: Օժտված լինելով վետոյի իրավունքով՝ նախագահը քսանմեկօրյա ժամկետում կարող է օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողովին՝ պահանջելով նոր քննարկում:

Կոռուպցիոն երևույթներ, հարցման մասնակիցների կարծիքով, հատկապես նկատվում են կրթական համակարգում: Հանրապետության նախագահը կրթության հետ կապված հարցերում, կարևորելով ոլորտն ու կրթական համակարգում առկա խնդիրները, կարող է կազմավորել խորհրդակցական մարմին, կարող է կրթության որակի և այլ հարցերի համար լուծում առաջարկող օրենքներում համապատասխան փոփոխություններ անելու առաջարկներ ներկայացնել Ազգային ժողով:

Կոռուպցիոն դրսևորումներով առանձնանում է դատաիրավական համակարգը: Հայաստանում արդարադատությունն իրականացնում են դատարանները: Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության՝ առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ, ինչպես նաև տնտեսական, զինվորական դատարաններ:

Մինչդեռ նախագահական ընտրությունների գնալիս հարկ է հիշել, որ դատական մարմինների անկախության երաշխավորը հանրապետության նախագահն է: Նա է ձևավորում և ի պաշտոնե գլխավորում Արդարադատության խորհուրդը: Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազին: Արդարադատության խորհրդի ներկայացմամբ նշանակում է դատավորներին:

...Գյումրեցի 47-ամյա Գեղամ Սարգսյանը հետաքրքրվում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հարցերով: «Ո՞րն է Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտության ելքը: Ինչպիսի՞ քաղաքականություն պիտի վարի Հայաստանն իր մերձավոր հարևանների հետ»:

Հարցը միանշանակ վերաբերում է պետության ղեկավարի իրավասությանը: Օրենսդրությունն ամրագրում է, որ նախագահն է ներկայացնում պետությունը միջազգային հարաբերություններում: Նա է իրականացնում արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը:

«Արտաքին քաղաքականության վրա պետք է ուշադրություն դարձնել, պետք է ամենայն ջանք գործադրել ցեղասպանության ճանաչման համար»,- ասում է մեր հայրենակից Արմինե Աբրահամյանը Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքից:

Կրկնենք՝ հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, իսկ մեր Սահմանադրության առաջին հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրությամբ օժտված լինելով լայն լիազորություններով՝ նախագահը պարտավոր է և կարող է հետևել անխախտ սկզբունքին. իր գործունեությունը կառուցել Հիմնական օրենքի պահանջներին համապատասխան:

**Աղավնի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2003թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՍՏՈՒԳԻ՛Ր ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

**ԱՅՑԵԼԻ՛Ր ՔՈ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՄ ՔՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑԻ՛Ր, ՈՐ ՔՈ ԱՆՈՒՆԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ Է ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՔՈ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ:**

*Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակում ընդգրկվում են ընտրական իրավունք ունեցող 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:*

## ԵԹԵ

*ա) լրացել է քո 18 տարին,*
*բ) քո անունը չկա ընտրողների ցուցակում,*
*գ) դու փոխել ես քո բնակության վայրը, ապա*

դիմի՛ր քո համայնքի ղեկավարին ընտրողների ցուցակում քո անունը ընդգրկելու վերաբերյալ հայտով:
Հայտի հետ պետք է ներկայացվի նաեւ անձնագրի պատճենը:

## ԵԹԵ

*ընտրողների ցուցակում քո տվյալներում կան անճշտություններ, ապա*

դիմի՛ր քո համայնքի ղեկավարին հայտնաբերված անճշտությունը վերացնելու պահանջով: Վերջինս` ընտրողների ցուցակների ճշտման վերաբերյալ դիմումներին պատասխանում է գրավոր` 3 օրվա ընթացքում:

## ԵԹԵ

*դու փախստական ես, ապա*

Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ չես կարող ընդգրկվել ընտրողների ցուցակում:

## ԵԹԵ

*դու զինծառայող ես, ապա*

ստուգի՛ր քո անունը քո զորամասի ընտրողների ցուցակներում:

## ԵԹԵ

*դու զինծառայող ես եւ բնակվում ես զորամասի տարածքից դուրս, ապա*

ստուգի՛ր քո անունը քո հաշվառման վայրի տեղամասային կենտրոնի ընտրողների ցուցակներում:

## ԿԱՐԵՎՈՐ Է ՀԻՇԵԼ

Հունվարի 10-ից մինչեւ փետրվարի 15-ը ներառյալ կարող ես դիմել համայնքի ղեկավարին բոլոր վերը նշված դեպքերում քո անունն ընտրողների ցուցակում ընդգրկելու հայտով/դիմումով: Հայտը/դիմումը պետք է լինի գրավոր, որը կարելի է ձեւակերպել նաեւ ազատ ձեւով: Պահանջի՛ր քո դիմումը գրանցել մատյանում:

Ընտրողների ցուցակների նախնական օրինակները հունվարի 10-ին փակցվում են ընտրական տեղամասում` բոլորի համար տեսանելի տեղում: Սակայն, տարվա ընթացքում եւս կարող ես ստուգել քո անունը ընտրողների ցուցակում` այցելելով քո համայնքի ղեկավարին:

Անճշտությունների վերաբերյալ հայտով կարող ես դիմել դատարան, եթե քո համայնքի ղեկավարը 3 օրվա ընթացքում գրավոր չի պատասխանել քո դիմումին: Դատարանը պարտավոր է հնգօրյա ժամկետում կայացնել որոշում, որը բողոքարկման ենթակա չէ:

Փետրվարի 17-ին տեղամասային կենտրոնում փակցվում են ընտրողների ցուցակների վերջնական օրինակները:

Քվեարկության նախորդող 2 օրերի ընթացքում, ինչպես նաեւ քվեարկության օրը կարող ես դիմել առաջին ատյանի դատարան` ընտրողների ցուցակում ընդգրկվելու հայտով: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրն ընտրողների ցուցակներում չընդգրկված քաղաքացուն տալիս է տեղեկանք` դատարան ներկայացնելու համար:

Անձը հաստատող փաստաթղթում (դրանք են` անձնագիր, 9-րդ ձեւ, նախկին խորհրդային նմուշի անձնագիր, իսկ սպաների եւ ենթասպաների համար` զինվորական վկայական, այլ զինծառայողների համար` զինվորականի գրքույկ) հայրանվան բացակայությունը (մյուս տվյալների համապատասխանության դեպքում) ընտրական որեւէ գործընթացի մասնակցության արգելք չի հանդիսանում:

Քո ընտրական տեղամասի հասցեն ճշտելու համար կարող ես դիմել քո համայնքի ղեկավարին, եթե քո ընտրական տեղամասը փոխվել է:

*(Հղումները արված են «ՀՀ Ընտրական Օրենսգրքի Գլուխ 2-ից»)*

**Օրենքով սահմանված կարգով պատասխանատվության են հանգեցնում`**

- մեկից ավելի ընտրական տեղամասերում ընտրողների ցուցակներում գրանցվելը,
- համայնքի ղեկավարի կողմից ընտրողների ցուցակները կազմելու կարգը եւ ժամկետները խախտելը:

**ՕԳՏՎԻ՛Ր ԸՆՏՐԵԼՈՒ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ` ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՎՐԱ ՄԻԱՅՆ ՄԵԿ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՆՎԱՆ ԴԻՄԱՑԻ ՎԱՆԴԱԿՈՒՄ ՄԻԱՅՆ ԱՅՍՊԵՍ**

V

ՔՈ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ԱՆՎԱՎԵՐ, ԵԹԵ ԴՈՒ ԿԱՏԱՐԵԼ ԵՍ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՆՇՈՒՄ ԿԱՄ ՔՈ ՃԻՇՏ ՆՇՈՒՄԸ ՉԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՆՎԱՆ ԴԻՄԱՑԻ ՎԱՆԴԱԿՈՒՄ:

ԿԱՏԱՐԻ՛Ր ՔՈ ՊԱՐՏՔԸ: ԱՊԱՀՈՎԻ՛Ր ՔՈ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍՏՈՒԳԵԼՈՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ:

USAID IFES

ՀԱՎԵԼՎԱԾԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԵՆ «ՖՈՏՈԼՈՒՐ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ: ՏՊԱԳՐՎԱԾ Է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ: ՏՊԱՔԱՆԱԿԸ` 75.000:

